

Վավերացնում եմ



ՀՊԱՀ-ի ռեկտորի պաշտոնակատար

Ա.Դ. Թարվերյան

Հաստատված է

ՀՊԱՀ-ի գիտական խորհրդի կողմից

31.08. 2012 թ. (արձանագրություն № 1)

ՍԿՄՍԱԿ ԴԱՍԱԽՈՍՔԵՐԻ ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ԵՎ ՍԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԱՌԱՋԸԹԱՑԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանում դասավանդողների քննականոն սերնդափոխությունը ապահովելու և սկսնակ դասախոսներով բուհը ապահովելու նպատակով շուրջ 7-8 տարի է ստեղծվել և գործում է ստաժորի ինստիտուտը: Այս քաղաքականության նպատակներից է բուհը ապահովել երիտասարդ, առաջարեմ հայացքներ ունեցող, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներին և օտար լեզուներին տիրապետող երիտասարդներով, ովքեր կրթական և գիտական ոլորտում կարող են նպաստել բուհի առաջընթացին, կրթության եվրոպականացմանը և պատրաստվող մասնագետների որակի բարելավմանը: Նման քաղաքականության արդյունքում համալսարանների ամբիոնները յուրաքանչյուր տարի համարվում է միջին հաշվով 8-10 երիտասարդ դասավանդողներով:

Ստաժավորման ինստիտուտը հայաստանի բուհերի մեջ գործող միակ նմանատիպ կառույցն է ագրարային համալսարանում, որի տևողությունը 6-12 ամիս է: Ստաժավորման ծրագրի հիմնական նպատակ մեկ երիտասարդ դասախոսներին ուսուցանել հոգեբանության, մանկավարժության փիլիսոփայությունը, ամբիոնների փորձառու դասախոսների հետ համատեղ մասնակցել ուսումնական գործընթացին, փորձել տիրապետելու մանկավարժության արվեստին և խրախուսելու նրանց ձգտումները (այդ ընթացքում նրանք խրախուսվում են նաև նյութապես, արտաքյուղեից):

Ստաժավորման ժամկետի ավարտից հետո ու իրականացվում է արժանի երիտասարդ դասավանդողների լիարժեք ներգրավում կրթական և գիտական գործառույթներում, միարժամանակ խթանելով նրանց վերապատրաստման և կատարելազորձման ծրագրերը Եվրոպական, ԱՊՀ երկրների և Հայաստանի համալսարաններում, ապահովելով նաև շարժունության լիարժեք ազատություն: Համալսարանը նպաստում է երիտասարդ դասավանդողների լիարժեք կայացման, հմտությունների ձեռք բերման, փորձի փոխանակման բոլոր գործընթացներին, նրանց լսարանային ծանրաբեռնվածությունը հանձնարարվում է ամբիոնի այլ դասախոսներին:

Համալսարանի գիտական խորիրոյի և դեկավարության նման քաղաքականության հաջորդ բաղադրիչը երիտադարդ դասախոսներին գիտական և մանկավարժական կոչումների շնորհումն է, ՀՀ ԲՈՀ-ի կողմից սահմանված կանոնակարգով, որի արդյունքում վերջին 7-8 տարիների ընթացքում երիտասարդ դասախոսների շնորհվել է դոցենտի գիտակ կոչում և գիտությունների թեկնածուի գիտական աստիճան (թվաքանակը ըստ տարիների վերցնել կադրերի բաժնից հավաստելու համար նշված քաղաքականությունը):

Համալսարանի նման մոտեցման ներքո իրականացվող գործառնությունների թվին են պատկանում ինստիտուցիոնալ փոփոխությունների դեկավարումը, երիտասարդ դասավանդողների խնդիրների լուծումը, այդ թվում՝ ուսուցմառության և ուսուցման կազմակերպման, գերազանցության ձանաշման ու գնահատման վերաբերյալ կարևոր որոշումներ կայացնելիս երիտասարդ դասավանդողների հետ փոխգործակցությունը և, ընդհանուր առմամբ, աշխատանքային այնպիսի միջավայրի ստեղծումը, որ կնպաստի արդյունավետ ուսումնառությանը և ուսուցմանը:

Այս առումով համալսարանում առավել կարևորվում է նրանց իսկ որակի (որպակավորման) բարձրացման հիմնահարցերը, կարիերայի առաջընթացը որպես անհատի և կենտրոնանում է նրա՝ որպես գիտնական զարգացման վրա: Այս ամբողջը այլ կերպ կարելի է անվանել “երիտասարդ դասավանդողների ակադեմիական զարգացում”, , որը առավելապես կարելի է օգտագործել ակադեմիական կարիերայի ամբողջական առաջընթացը բնութագրելու համար և ենթադրում է ակադեմիական աշխատանքի ողջ տիրույթում անձնական, որպակավորման բարձրացման ու կազմակերպչական առաջընթացի ինտեգրում: Ի լրումն ուսումնառության և

ուսուցման ծրագրերի, մասնագիտական, ակադեմիական և երիտասարդ դասախոսների զարգացման ծրագրերը կապված են նաև կարիերայի պլանավորման և գիտական աշխատանքի հմտությունների օժանդակման հետ, ինչպիսիք են համալսարանում գործող պրոբլեմային լաբորատորիաներում, գիտական ստորաբաժանումներում և հետազոտական դրամաշնորհներում նրանց ընդգրկումը, (Վերցնել քանի երիտասարդ դասախոս է ընդգրկված կազմ***) ստուգումը, նյութերի հրապարակումը և գիտական աշխատանքների վերահսկողությունը: Թեպետ պետք է նկատել, որ երիտասարդ դասավանդողների (և ոչ միայն) որակավորման բարձրացման շեշտադրումը անհատի զարգացման վրա է, ակադեմիական և դասախոսական նրա զարգացման ներառում է նաև կազմակերպչական հմտությունների զարգացման բաղկացուցիչ:

Այս տեսանկյունից համալսարանը պետք է լուրջ ներդրումներ կատարի նմանատիպ մոտեցումները ավելի ամբողջական, հեռանկարային և արդյունավետ դառձնելու նպատակով: